

ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԹԵՄԱՆ ԶԱՔԱՐԻԱ ԱՒԱՆՑՈՒ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

(Ըստ «Մատենադարան»՝ Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի
Գիտահետազոտական ինստիտուտի Ձեռագրախմբի)

ԱԽԵՏ ԱԽԵՏԻՍԵԱՆ
avetavetisyan@yahoo.com

Հայկական մանրանկարչութեան պատկերազրական ու ոճական բազմազանութեան մէջ իր ուրոյն տեղն ունի Վասպուրականը: Մի քանի հարիւրամեակ (ԺԳ.-ԺԶ. դդ.) վասպուրականցի մանրանկարիչների վրձնած անկրկնելի պատկերներն էապէս տարբերում են պատմական Հայաստանի միւս աշխարհների գրչական արտոնների համանման ստեղծագործութիւններից՝ աստուածաշնչական պատումների պատկերաբանական վերարտադրումի իւրօրինակութեամբ:

Սակայն ԺԵ. դարում Մինաս Ծաղկողը¹ արմատապէս փոխեց վասպուրականեան աւանդական ոճն ու պատկերազրութիւնը՝ ներմուծելով կիլիկեան մանրանկարչութեանը յատուկ գեղարուեստական մտածելակերպն ու պատկերացումները: Նրան հետեւող ժամանակակից եւ յետագայի վասպուրականցի վարպետներն աշխատում էին նկարազարդ ձեռագրի ստեղծման նոր սկզբունքներով² եւ միայն մանրանկարների յօրինուածքների մանրամասներում էին քիչ թէ շատ հետեւում նախնեաց ժառանգութեանը:

Մինասի նորամուծութիւնների հետեւողն էր նաեւ Զաքարիա Աւանցին³: Այս բազմարդիւն արուեստագէտը ոչ միայն մանրանկարիչ էր, այլեւ կազմող ու գրիչ: Նա ներկայացնում է ԺԶ. դարի վերջի-ԺԷ. դարի առաջին քսան տարիների Վասպուրականի մանրանկարչութիւնը:

Զաքարիան ծնուել է Վանին մերձակայ Աւանց գիւղաքաղաքում, հաւանաբար ԺԶ. դարի երկրորդ կէսին⁴: Նրանից մեզ հասած վաղ շրջանի առաջին երկու ձեռագրերը աւետարաններ են, որոնք մանրանկարիչը նկարազարդել է 1595ին⁵: Մինչ շահ արասեան բռնազաղթը՝ նա ստեղծագործել է Աւանցում: 1604ին տարագրուելով Պարսկաստան՝ Զաքարիան շարունակել է իր աշխատանքը Նոր Զուղայում, Սպահանում, Քաղաքում: Վանեցի այս վարպետն իր մահկանացուն կնքել է օտարութեան մէջ, 1617ին⁶:

Ընդհանուր հաշուով Զաքարիա Աւանցուց պահպանուել են 19 նկարազարդ Աւետարան, 2 Մաշտոց, 1 Աղօթամատոյց եւ 2 հատակտոր: Այս պատկառելի ձեռագրական-մանրանկարչական ժառանգութեան զգալի

մասը գտնուում է «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Գիտահետազոտական ինստիտուտում: 10 նկարազարդ աւետարաններն⁷ ամբողջական ու սպառիչ պատկերացում են տալիս Ջափարիայի մանրանկարչական արուեստի մասին, ի յայտ բերում նրա նախասիրած պատկերազրական տիպը, պատկերի յօրինուածքային, գունային, ոճական ու խորհրդաբանական առանձնայատկութիւնները:

Մատենադարանի հաւաքածուում պահուող Ջափարիա Աւանցունկարազարդած աւետարաններից ցաւօք ոչ բոլորն են պահպանել մանրանկարների նախնական շարքերը: Մասնաւորապէս պակասում է թիւ 6503 (1595 թ.), 5345 (1611 թ.), 10220 (1601 թ.), 4981 (ԺՁ. դարասկիզբ) ձեռագրերի թեմատիկ մանրանկարների հիմնական մասը: Ամբողջական են թիւ 5507 (1595 թ.)⁸, 5794 (1599-1600 թթ.), 2804 (1600 թ.), 4101 (1603 թ.), 7755 (1603 թ.)⁹ եւ 4838 (1604 թ.) ձեռագրերի մանրանկարները: Հետեւաբար Ջափարիայի արուեստին բնորոշ պատկերազրական տիպը պէտք է զատորոշել հիմնուելով մանրանկարչական ամբողջական շարքը պահպանած ձեռագրերի վրայ:

Հետեւելով Վասպուրականի մանրանկարիչների հնամենի սովորութեանը, որը դարերի ընթացքում կանոնական էր դարձել, Ջափարիան իր մանրանկարները նկարում է ձեռագրի առաջին թերթերի վրայ¹⁰: Սկսած 1595ին նկարազարդած Աւետարանից¹¹, Ջափարիան յետագայ բոլոր ձեռագրերում օգտագործում է միեւնոյն պատկերազրական տիպը, որը ներառում է պատկերներ Հին եւ Նոր Կտակարաններից:

Մանրանկարների այս պատկերազրական շարքը սկսւում է Աստուածաշուքի «Ծննդոց» գրքից՝ աստուածային արարչագործութեան պատկերներով, որոնք եօթն են եւ ներկայացնում են արարածոց ծննդաբանութիւնն ըստ արարչագործութեան եօթ օրերի:

Հերթականութեամբ, ձեռագրի իւրաքանչիւր թերթին համապատասխան բացատրագրով Ջափարիան առանձին-առանձին նկարում է պատկերը եւ գրում. «Ա օր «Երկինք եւ երկիր, ջուրք եւ անջրպետութիւնք», Բ օր «Հաստատեցան երկինք եւ երկիր, ջուր եւ հուր աստիճանաց», Գ օր «Ժողովեցաւ ջուրն ի մի կողմն եւ երեւեցօ ցամաք, բոյսք եւ բանջարք, ծառք եւ պտղաբերք», Դ օր «Արեգակն եւ լուսինն եւ աստեղք գիշերոյ, փառք անեղին Ա[ստուծոյ]», Ե օր «Հռչուն թւօ[ւ]րք եւ ձուկն Լեւիաթան, եւ հօն կայտառ որ ասի Արմաւ: Եւ Հայրն Ա[ստուա]ծն ի վ[ե]ր[այ] անպատում արքոոյ, եւ հր[ե]շտ[ակ]ք գոյանային ի լուսոյ եւ փառս տային Ա[ստուծոյ]», Չ օր «Գազան եւ անասուն եւ արար մարդ ըստ պատկերի իւրում» եւ Է օր «Հանգիստ[ւ] ամ[ենայն] գործոց զոր արար Ա[ստուա]ծ»¹²:

Հայր Աստծոյ հանգիստը ներկայացնող մանրանկարին անմիջապէս յաջորդում է «Եզեկիէլի տեսիլքը» պատկերը («Տեսիլն Եզեկիէլի զոր ե-

տես ի գետն Բոբար. զանիւն եւ զխորհուրդ չորէք կերպ[եա]ն աթոռոյ. եւ Բ[րիստո]ս ի վ[ե]ր[ա]յն [ն]ր[ա] բազմեալ»), որը կարծես հակասում է պատկերազրական շարքի յաջորդականութեան տրամաբանութեանը, քանի որ դրանից յետոյ Զաքարիան պատկերել է «Եւայի ստեղծումը Ադամի կողից- դրախտ» («Ստեղծումն Եւայի ի կողէն Ադամայ. եւ լանեն զ գետք ի դրախտէն Ադամայ. Եփրատես. Տիգրիս. Փիսոն. Գեհոն») եւ «Արգելուած պտղի ճաշակումը. մեղսագործութիւն» («Անն խաւսի ի յուկն Եւայի եւ պտուղն զոր կերան եւ մերկացան եւ ծայնեալ Ա[ստուա]ծութիւն Ադամայ թէ ուր ես») տեսարանները, որոնք նոյնպէս վերաբերում են «Ծննդոց» գրքին: Սակայն սա թուացեալ չեղում է պատկերների յաջորդականութեան տրամաբանութիւնից: «Եզեկիէլի տեսիլքը» (յնչպէս կը տեսնենք յետագայում) միջանկեալ մանրանկարը աստուածաբանութեան տեսանկիւնից սերտօրէն առնչւում է Ադամի եւ Եւայի թեմային:

Այդպիսով «Եւայի ստեղծումը Ադամի կողից- դրախտ» եւ «Արգելուած պտղի ճաշակումը. մեղսագործութիւն» մանրանկարներով Զաքարիան եզրափակում է Հին կտակարանեան շարքը եւ անցնում նոր կտակարանեան թեմաներին:

Զորս աւետարանների կարեւորագոյն իրադարձութիւնները ներկայացնող մանրանկարների շարքը Զաքարիան սկսում է «Աւետում» տեսարանով. «Աւետիքն Գաբրիէլի որ ետ սրբոյ Կուսին Մարիամու ս[ուր]բ Ա[ստուա]ծածնին որ յղացաւ զբանն Ա[ստուա]ծ» եւ իւրաքանչիւր պատկերի համապատասխան մասում յօրինուածքի աւետարանական կերպարներն ու իրադարձութիւնը մեկնաբանող բացատրագիր թողնելով շարունակում. «Ծնունդ եւ մոգերի երկրպագութիւն» («Ծնունդն Բ[րիստոս]ի ի յայրին. Հովիքն. ոչխարք. Թ[ա]զ[ա]տ[ո]րք մ[ո]ղ[ո]ղք Մաքոն ծեր. Գազալ[ա]ր թուի մ[ո]ղ[ո]ղք. Բաղդ[ա]ս[ա]ր տղայ. Հրեշտակք. Յովսէփ. Էշն. եզն. Անբանի[ց] մսուրն:»), «Տեառնընդառաջ» (Գալուստ քառասնաւթեայ ի տաճարն զոր ընկալեալ Սիմէովն ի գիրկն իւր. Յովսէփ. Ա[ստուա]ծածնին: Աննա դուստրն Փանուելի:), «Մկրտութիւն» («Մկրտութիւն Բ[րիստոս]ի ի Յորդանան. Վիշապն անդընդային: Աջն Հայրակ[ա]ն եւ աղօնակ[ե]րպէ Հոգին: Ս[ուր]բ Յով[ի]հաննէս: Հրեշտակք. Դեն:»), «Պայծառակերպութիւն» («Պայծառակերպութիւն ի Թաբուրական լեռն: Պետրոս. Յովհաննէս. Յակոբոս: Եղիայ. Մովսէս:»), «Ղազարոսի յարութիւն» («Յիսուս Բ[րիստոս] Յարուցանէ զՂազարոս: Բորք Ղազ[ա]րոս. Մարթա. Մարիամ: Առ[ա]ք[ե]ալ[ե]ն: Գեր[ե]զմ[ա]նն Ղազարոս: Ի բաց արարէք զվէնդ:»), «Մուտք Երուսաղէմ» («Գալուստ Տեառն մերոյ Յովանական ի Ս[ուր]բ քաղաքն Յերուսաղէմ: Տղայն ոսոս հատանի: Առ[ա]ք[ե]ալ[ե]ն: Երբն: Հանդերձ տարածանի:»), «Ոտնիւայ» («Յիսուս

Բ[րիստոն]ս բազմեալ լուա[յ] զոտս առաքելոց. նախ զՊետրոսի եւ ապա զայլոց: Առ[ա]ք[եա]լքն:», «*Խաչելութիւն*» («ժաշելութիւն») Բ[րիստոն]ի ամենագար Թագօրին: Հաւն Հաւալսան որ զարիւն կարուցանէ յօրինակ Բ[րիստոն]ի եւ զծագսն կենդանացուցանէ: Ա[ստուա]ծածինն: Յոհաննէս:», «*Խաչից իջեցում*» («Պատանումն Բ[րիստոն]ի ամենագար Թագաւորին: Հրեշտակք: Նիկոյդիմոս: Կանայքն: Յովսէփ:», «*Դժոխքի աւերում*» («Աւերումն դժոխոց որ Բ[րիստոն]ս ըմբռնեալ է զԱդամ եւ ազատէ: Եւայ: Ադամ: Աւօք: Ս[ուր]բ Յովհաննէս: Դաիթ: Սողոմոն: Դրունք դժոխոց խորտակեալ: Վիշապն անդնդա[յ]ին:», «*Յարութիւն*» («Յարութիւն») Բ[րիստոն]ի. լուսափայլ հրեշտակն ի վ[ե]ր[ա]յ վիմին բազմեալ: Կանայքն իւղաբ[ե]րք: Գերեզմանն Բ[րիստոն]ի: Պառապանքն:», «*Համբարձում*» («Համբարձումն Բ[րիստոն]ի յերկինս առ Հայրն: Յ[իսու]ս Բ[րիստոն]ս: Հր[ե]շտակք: Առաքեալքն: Ա[ստուա]ծածինն:», «*Հոգեգալուստ*» («Երկոտասան առ[ա]քեալքն ի վերնատունն եւ աղօնակ[ե]րպէս Հոգին: Ներքնատ[ո]ւն. պարթեք. մարք. իլամացիք: Վերնատունն: Առ[ա]ք[եա]լքն:», «*Երկրորդ գալուստ*» («Փողն Գաբրիէլի զոր հնչեն հրեշտակք»)¹³, «*Վերջին դատաստան*» («Չորեքերպ[եա]ն ահեղատիպ աթոռն անմահ Արքային: Կըշեռն դատաստանին: Ողորմութե[ան] հրեշտակն: Դեք:»):

Այսպիսով, Զաքարիա Աւանցու նախընտրած մանրանկարչական շարքը բաղկացած է 26 պատկերներից: Դրանցից 10ը վերաբերում են Հին, իսկ 16ը Նոր Կտակարաններին:

Աւետարանական պատկերաշարում Զաքարիան ամբողջովին հետեւում է Մինաս Ծաղկողի պատկերագրական թեմաներին, որոնք նա կիրառել է իր ձեռագրերում¹⁴: Նոյնիսկ յօրինուածքների կառուցման եւ նկարադաշտում կերպարների դասաւորութեան մէջ զգացնել է տալիս Մինասի հեռաւոր ազդեցութիւնը: Սակայն Հին Կտակարանի պատկերաշարում Զաքարիա Աւանցին ոչ միայն ինքնատիպ է իր ստեղծագործութեամբ, այլեւ եզակի ու անկրկնելի՝ մանրանկարների պատկերագրութեամբ: Հին կտակարանեան թեմաներից Մինաս Ծաղկողի նկարագարգած աւետարաններում հանդիպում է առաւելապէս «Աբրահամը զոհաբերում է Իսահակին»¹⁵ պատկերը: Մինչդեռ Զաքարիա Աւանցու արուեստում Աւետարանի նկարազարդման համակարգ է բերուած ամբողջական ու կուռ մի շարք, որը խորհրդաբանական-նշանակային պատկերի սկզբունքին զուգահեռ աւելացնում է մի նոր սկզբունք՝ խորհրդաբանական-պատմողականը:

Մինչ Զաքարիա Աւանցին, հայկական մանրանկարչութեան մէջ հին կտակարանեան պատկերներն աւետարաններում ի յայտ են գալիս Ժ. ԺԱ. դարերում, մասնաւորապէս «Աբրահամը զոհաբերում է Իսահակին» տեսարանը¹⁶, «Աբրահամի հիւրասիրութիւնը»¹⁷ եւն.:

ԺԳ. դարից սկսած, հին կտակարանեան մանրանկարներ են հանդիպում նաեւ հայերէն նկարազարդ Աստուածաշուէններում եւ ծխական մատեաններում՝ Սաղմոսարաններում, Մաշտոցներում, Ժաշոցներում¹⁸։ Ինչ վերաբերում է «Արարչագործութիւն» ամբողջական շարքին, ապա այն հայկական մանրանկարչութիւն է մուտք գործել ԺԴ դարում¹⁹։ Շարքի հնագոյն եւ առաւել հետաքրքրական օրինակը զետեղուած է Թորոս Տարօնացու պատկերազարդած Աստուածաշուէնում²⁰։ Սիւնեաց մեծ մանրանկարիչն արարչագործութեան փոքրագիր պատկերները նկարել է «Ծննդոց» գրքի անուանաթերթի ի գլխատառի երկայնական առանցքի մէջ, վերից վար, ուղղահայեաց յաջորդականութեամբ։ Փոքրիկ օւալների մէջ նա հերթականութեամբ պատկերել է արարչագործութեան վեց օրերը եւ եօթերորդ օրը որպէս Աստծոյ հանգիստ²¹։

«Արարչագործութիւն» շարքի մէկ այլ պատկերազրական տարրերակ է օգտագործել Ղրիմի հայերէն Աստուածաշուէնի նկարիչը²²։ Նա թեման ներկայացրել է արդէն մէկ ամբողջական թերթի վրայ՝ համադրելով արարչագործութեան բոլոր օրերն Ադամի ու Եւայի ստեղծման, անկման ու դրախտից վտարուելու պատմութեան հետ²³։ Այս մանրանկարի վերին եւ ձախակողմեան եզրաշերտը զբաղեցնում են արարման առաջին հինգ օրերի պատկերները, իսկ կենտրոնական մասը բաժանուած է վեց քառակուսիների, որոնց մէջ յաջորդաբար ներկայացուած է Ադամի ու Եւայի պատմութիւնը։

ԺԴ դարից մեզ է հասել եւս մէկ ուշագրաւ պատկերազրական տարրերակ։ Աւետարանում, որը նկարազարդել է Գրիգոր Գծողը (Սիւնիք), ներկայացուած են մանրանկարներ, որոնք վերաբերում են Ծննդոց գրքին²⁴, «Եւայի ստեղծումը», «Ադամն ու Եւան դրախտում», «Մեղսագործութիւն» եւ «Արտաքսում դրախտից»²⁵ թեմաներին։ Հետաքրքրական է, որ «Ծննդոց» շարքի մանրանկարները, որոնք յատուկ են ձեռագիր Աստուածաշուէններին, դառնում են Աւետարանի պատկերազարդման մի մաս։ Այս ձեռագրում նորոյթն այն է, որ «Ծննդոց» պատկերները ներկայացուած են առանձին, ամբողջ էջով մէկ, նախորդ օրինակներից բոլորովին այլ յօրինուածքով ու պատկերազրութեամբ։ Թէեւ արարչագործութեան վեց օրերի, Աստծոյ հանգստի եւ Ադամի ստեղծման պատկերներն այս Աւետարանում բացակայում են, ամենայն հաւանականութեամբ դրանք եղել են, սակայն կորսուել են ժամանակի ընթացքում, քանի որ պատկերազրօրէն անհաւանական եւ անտրամաբանական է «Ծննդոց» շարքը սկսել «Եւայի ստեղծումը» մանրանկարով։



Եզեկիի տեսիլը



Ջրային կենդանիների ու բույսերի արարումը

«Արարչագործութիւն» մանրանկարների յաջորդ նմոշն արդէն ժԶ. դարից է: Դրանց հեղինակն Առաքել Գեղամեցին է, Չաքարիա Աւանցու ժամանակակիցը: 1587ին նրա նկարազարդած Աւետարանում²⁶ կայ մեզ հետաքրքրող մանրանկարների ամբողջական շարքը, որը սկսւում է չորեքկերպեան ակթոսին բազմած Աստծոյ պատկերով իսկ մնացած մանրանկարներն ունեն հետեւեալ յաջորդականութիւնը՝ «Կամարն յերկնային եւ հող»²⁷, «Ծառ, տունկ, աղբիւր եւ գետք», «Արեգակ», «Լուսին», «Թռչունք եւ անասունք ծովու եւ ցամաքի», «Աղամ եւ Եւայ», «Չարդք աշխարհիս» եւ «Արտաքսումն ի դրախտէն»²⁸:

Այսպիսով, «Արարչագործութիւն» թեմայի նախընթացը հայկական մանրանկարչութեան մէջ ներկայացուած է չորս պատկերազրական տարրերակներով: Սակայն միայն Առաքել Գեղամեցու մանրանկարներն են, որ շարքի ամբողջականութեան եւ պատկերները էջով մէկ ներկայացնելու տեսանկիւնից առաւել մօտ են Չաքարիա Աւանցու ստեղծագործութեանը²⁹:

Այժմ տեսնենք, թէ ինչպիսին են «Արարչագործութիւն» շարքի մանրանկարները Չաքարիա Աւանցու ձեռագրերում: Շարքի յօրինուածքային ընդհանուր սկզբունքը հետեւեալն է. արարչագործութեան եօթ օրերի մանրանկարները Չաքարիան պատկերել է խորանատիպ ու խիստ ոճաւորուած մանրանկարչական կառոյցների մէջ, որոնց տարրեր ուղղութիւններով միահիւս զարդագօտիները սահմանազատում են պատկերները՝ նկարազարդուող թերթի ընդհանուր մակերեսից եւ ստեղծում մանրանկարների ոչ միայն արտաքին, այլեւ ներքին շրջանակը: Արժանայիշատակ է, որ այդ մանրանկարների թէ՛ ընդհանուր յօրինուածքը, թէ՛ զարդագօտիների գեղարուեստական յարդարանքը ոչ մի ձեռագրում նոյնութեամբ չեն կրկնուում: Չաքարիայի վրձնած այդ իւրօրինակ խորանները վերից վար ունեն երկմաս, իսկ երբեմն էլ՝ եռամաս բաժանում: Դրանց վերնամասը աստուածութեան ոլորտն է, իսկ ստորինը՝ բուն արարչագործութեան: Արտաքինից այդ խորանները վերնամասում երիզւում եւ աւարտւում են գմբէթակիր խոյականման ելուստներով, խաչերով, երկրաչափական զարդագօտիներով եւ այլ զանազանակերպ զարդապատկերներով: Խորանների յարդարման այս ձեւից առանձնանում է միայն արարչագործութեան 5րդ օրը ներկայացնող պատկերը, որտեղ յօրինուածքի վերնամասը իւրատեսակ կամար կազմելով՝ զբաղեցնում է հրեշտակների դասը:

Բոլոր մանրանկարներում կենտրոնականը Աստծոյ պատկերն է, ում Չաքարիան ներկայացնում է Յիսուս Քրիստոսի կերպարանքով: Այս շարքի գրեթէ բոլոր մանրանկարներում Չաքարիան նրան պատկերել է անմօրուք պատանու տեսքով (Քրիստոս էմմանուէլ), բացառութեամբ Աստծոյ հանգստի օրուայ եւ Եւայի ստեղծման պատկերների: Չաքարիան Քրիստոսին ներկայացնում է չապիկով, թիկնոցով, երկար

մագերով եւ խաչագարդ, ոսկէ լուսապսակով³⁰։ Յիսուսը պատկերուած է ծալապատիկ նստած կամ կիսանդրի։ Նա ձեռքի տիրական շարժումով օրհնում է իր ստեղծագործութիւնը։

«Արարչագործութիւն» շարքի մանրանկարների յօրինուածքի ստորին մասում արարածն է։ Արարչագործութեան առաջին երեք օրերի տեսարանները ոճաւորուած են եւ արտայայտուած են զարդապատկերի տեսքով։ Ակնյայտ է, որ Ջաքարիան իր ստեղծագործութիւններում մեծ դեր է յատկացնում զարդապատկերին։ Այս գեղարուեստական եւ խորհրդաբանական սկզբունքն արդարացուած է յատկապէս արարչագործութեան մանրանկարներում։ Պատճառն այն է, որ անհնար է բացայայտ առարկայօրէն պատկերել անարտայայտելին, այն, ինչ վեր է մարդկային պատկերացումներից, որը տուեալ պարագայում աստուածային արարումն է։ Եւ Ջաքարիան դիմում է զարդի, զարդանկարչութեան, խորհրդապատկերի եւ խորհրդաբանութեան միջոցին³¹։ Մի փոքր այլ է յաջորդ երեք մանրանկարների՝ «Արեգակն ու լուսինը», «Ջրային կենդանիներն ու թռչունները», «Գամաքային կենդանիների ու Ադամի ստեղծումը» պատկերների պարագան։ Պահպանելով վերը նշուած սկզբունքը՝ Ջաքարիան միաժամանակ աւելի առարկայական է դարձնում յօրինուածքը, փորձելով տեսարանի մտաւոր հայեցողութեանը զուգահեռ տալ նաեւ դրա զգայական-տեսողական ընկալման հնարաւորութիւնը։ Այսպէս, Լուսինն ու Արեգակը պատկերուած են դէմ-յանդիման եւ իրարից բաժանուած են ալիքաձեւ գօտիներով, որոնց կենտրոնում նկարիչը զարդանշան է տեղադրել։ Լուսինը մարդադէմ է, միաժամանակ յստակ ուրուագծւում է երկնային լուսատուի ոսկէ մահիկը, իսկ արեգակի ճաճանշագարդ կիսագնդի մէջ Ջաքարիան պատկերել է բազմաթիւ մարդկային դէմքեր։ Եւ լուսինը, եւ արեգակը ներկայացուած են իրենց հարազատ միջավայրում՝ աստղազարդ խորքի վրայ։

Ջրային կենդանիների ու թռչունների արարման մանրանկարում (նկ. 1) Ջաքարիան երկու ալիքաձեւ գօտիներով եռամաս սահմանազատել է ջուրը, օդը եւ հողը ներկայացնող պատկերատարածքները՝ համապատասխանաբար պատկերելով ջրային աշխարհի ներկայացուցիչ հսկայ մի ձուկ, կենտրոնական պատկերադաշտում՝ մի մեծ թեւատարած թռչուն եւ աջակողմում՝ ցամաքային թռչուններ, հիմնականում սիրամարգեր։

Ադամի ու ցամաքային կենդանիների արարման մանրանկարում, իր պատկերազրական լուծումով շատ հետաքրքիր է Ադամի ստեղծման դրուագը։ Մարդու արարումը նկարիչը առանձնացրել է ընդհանուր արարչագործութիւնը ներկայացնող պատկերադաշտից՝ մանրանկարի ստորին հատուածից եւ տեղափոխել վերին պատկերադաշտ՝ աստուածութեան բնակատեղի։ Դրանով Ջաքարիան ընդգծել է Ադամի՝ մարդու, նախապատիւ ու գերակայ դերը ողջ արարածի նկատմամբ։

Աղամբ պատկերուած է կիսանդրի, մերկ, երկնային հատուածի մէջ, Արարչի աջ կողմում: Մանրանկարների այս շարքի խորհրդարանութեան տեսանկիւնից շատ կարեւոր է հատուածի կիրառումը Չաքարիայի կողմից: Հատուածը, որ Աստծոյ անմատոյց լոյսի խորհրդանշն է, միակը չէ «Արարչագործութիւն» շարքի մանրանկարներում: Արարչագործութեան առաջին օրուայ եւ «Մեղսագործութիւն» պատկերներում Արարիչը՝ Յիսուս Քրիստոսը, նոյնպէս նստած է հատուածի մէջ: Ակնյայտ է, որ Չաքարիան ակնարկում է առաջին եւ երկրորդ արարչագործութիւններին (աշխարհի արարում եւ աշխարհի փրկագործում), պատկերի լեզուով ձօնում է Փրկչին եւ Նրա փրկագործութեանը: Այն առաքելութիւնը, որին կանչուած էր Աղամբ մեղսագործութեան պատճառով մնում է անկատար: Աղամբ ստեղծուել էր, որպէսզի թագաւորէր մնացած ողջ արարածի վրայ եւ աստուածացնէր այն:

Առաքելութիւնը իրագործում է Նոր Աղամբ՝ Աստծոյ Որդին, Յիսուս Քրիստոսը, ով իր տնօրինական գործերով ու քաւարար մահով փրկում ու մաքրագործում է ողջ արարչագործութիւնը: Երկրորդ արարչագործութիւնը մի ժամանակային, պատմական ու վերապատմական ընթացք է, որը նախախնամութեան կամքով աւարտուելու է աստուածային փառքի յայտնութեամբ: Եւ փրկագործութեան թեման է, որ սկզբից մինչեւ վերջ արծարծում է Չաքարիա Աւանցու մանրանկարներում: Փրկչի ու փրկաբանութեան զաղափարը ընդգծելու համար նա օգտագործում է թէ՛ առանձին պատկերները, թէ՛ խորհրդանշաններն ու պատկերազրական մանրամասները եւ թէ՛ բացատրագրերը:

Արդէն նշել ենք, որ արարչագործութեան չորրորդ օրուայ մանրանկարում Չաքարիան արեգակի մէջ պատկերել է մարդկային բազմաթիւ դէմքեր: Արեգակի գործառոյթը միայն արարածին լոյս ու ջերմութիւն տալը չէ, քանի որ այս մանրանկարում այն ունի նաեւ հոգեւոր նշանակութիւն եւ խորհրդանշում է Յիսուսին՝ Արդար Արեգակին³²: Եւ արեգակի մէջ պատկերուածները, ըստ Աւետարանի խօսքի, հենց այդ արդարներն են, որոնք փրկուել են Յիսուսի արեամբ³³:

Հինգերորդ օրուայ մանրանկարում փրկաբանութեան թեման ներկայացուած է շատ աւելի ակնառու: Սակայն մանրանկարի ծածուկ իմաստը բացայայտում է Չաքարիա Աւանցու թողած բացատրագրի շնորհիւ: Յիշեցնենք, որ խնդրոյ առարկայ մանրանկարում Չաքարիան պատկերել է մի մեծ ձուկ եւ մի մեծ թեւատարած թռչուն: Առաջին հայեացքից տպաւորութիւն է ստեղծւում, որ նկարիչը պատկերազարդել է ըստ Աստուածաշունչի՝ ձեռքի տակ ունենալով Մենդոց գրքի համապատասխան հատուածը³⁴: Սակայն բացատրագիրը այլ բան է ասում. «Հոյուն (թռչուն - Ա.Ա.) բուօ[n]րք (թեւաւորք - Ա.Ա.) եւ ձուկն Լեւիաթան, եւ հօն (հաւն - Ա.Ա.) կայտառ որ ասի Արմա: Եւ Հայրն Ա[ստուա]ծն ի վ[ե]ր[այ] անպատում աթոռոյ, եւ հր[ե]շտ[ակ]ք գոյանային ի

լուսոյ եւ փառս տային Ա[ստուծոյ]»։ Աստուածաշնչեան «Ծննդոց» գրքի արարչագործութեանը վերաբերող բնագրում խօսք չկայ ո՛չ Լեւիաթանի, ո՛չ էլ Արմաւի մասին։ Աստուածաշնչում Լեւիաթանի մասին յիշատակում է մասնաւորապէս Յորի գրքում³⁵, Դաւթի սաղմոսներում³⁶ եւ այլ տեղերում։ Լեւիաթանը (երբայեքէնից թարգմանած նշանակում է ահռելի վիշապ), ըստ սուրբգրային բնագրերի, Աստծոյ արարածն է, սակայն առանձնաշատուկ ու տարբեր բոլոր մնացածներից։ Նա ահռելի ու սարսափազդու է, անխոցելի է զէնքերից, ջրային տարերքը նրա բնակատեղին է։ Լեւիաթանը ծովերի թագաւորն է։

Այս աներեւակայելի արարածի էութիւնը հասկանալուն օգնում է մեկնողական գրականութիւնը։ Ս. Գրիգոր Տաթեւացին այս հրէշին ներկայացնում է որպէս օրինակ իմանալի վիշապի, այսինքն՝ սատանայի³⁷։ Իսկ Դաւթի սաղմոսների մեկնիչներն աւելի են ամբողջացնում Լեւիաթանի պատկերը։ Մասնաւորապէս 73րդ սաղմոսը մեկնաբանելիս՝ «Դու քո զօրութեամբ ծովը հաստատեցիր, եւ վիշապների գլուխը խորտակեցիր ջրերում։ Դու վիշապի գլուխը փշրեցիր եւ որպէս կերակոր տուիր հնդիկների զօրքերին», տրւում է հետեւեալ բացատրութիւնը։ Ծով-ջուրը մեղսագործ աշխարհի խորհրդանիշն է, Լեւիաթան-վիշապը՝ սատանայի, իսկ հնդկացի զօրքը սատանայի արբանեակների՝ դեւերի, որոնց պարտութեան է մատնում Յիսուս Քրիստոսը³⁸։

Սակայն որտե՞ղ է մեր պատկերում Յիսուս Քրիստոսը։ Նրան խորհրդանշում է Արմաւ թռչունը։ Արմաւ-Փիւնիկի³⁹, մեռնող ու յարութիւն առնող թռչունի պատմութիւնը յայտնի է մարդկութեանը անյիշելի ժամանակներից եւ բնական է, որ քրիստոնէական ժամանակներում արուեստում եւ գրականութեան մէջ այն պէտք է դառնար Քրիստոսի խորհրդանշան-օրինակը։ Եթէ մինչքրիստոնէական արուեստում Փիւնիկը յաւիտենութեան խորհրդանիշն էր, ապա քրիստոնէականում դարձաւ նշանակը յարութեան⁴⁰։

Փիւնիկը քրիստոնէական արուեստում պատկերւում է առաւելապէս արծուի տեսքով։ Նրա երանգներն էին ոսկեգոյնն ու կրակագոյնը։ Այդպիսին է նաեւ Չաքարիա Աւանցու Փիւնիկը⁴¹։ Նա թեւատարած գլմաւորում է Լեւիաթան-վիշապին ու պաշտպանում արարածին⁴²։

Փրկագործութեան թեման շարունակւում է նաեւ յաջորդ մանրանկարներում, Հայր Աստծոյ հանգստեան պատկերում։ Աստուած ներկայացուած է չորեքկերպեան աթոռին՝ յար եւ նման Յիսուս Քրիստոսի երկրորդ գալստեան պատկերագրական ընդունուած կերպին։ Այս մանրանկարից յետոյ նկարիչը պատկերում է «Եզեկիէլի տեսիլքը» (նկ. 2)։ Մենք արդէն նշել էինք, որ այս մանրանկարը կարծես խախտում է ողջ շարքի ներքին տրամաբանութիւնը, քանի որ այն որեւէ առնչութիւն չունի «Ծննդոց» գրքի հետ։ Սակայն այս մանրանկարն իր բովանդա-

կութեամբ անմիջականօրէն առնչուում է փրկագործութեան աստուածաբանութեան եւ խորհրդի հետ:

«Եզեկիէլի տեսիլք» մանրանկարը հայերէն ձեռագիր Աստուածաշունչերում պատկերւում է ԺԳ. դարից⁴⁵, իսկ Աւետարաններում առաջին անգամ հանդիպում է ԺԵ. դարում: Այդ առաջին պատկերը պատկանում է Մինաս Մաղկողին եւ գետեղուած է 1455ին նրա նկարազարդած Աւետարանում⁴⁶:

Յայտնի է, որ Աստուածաշունչ Մատենում Եզեկիէլի մարգարէական գիրքը ամենախորհրդաւորներից է: Եզեկիէլի տեսիլքներն այնքան խրթին են մարդկային հասկացողութեան համար, որ հնում հրեաները նոյնիսկ արգելում էին ընթերցել այն երեսունը չորսորած անձանց⁴⁷: Սակայն քրիստոնեայ աստուածաբանները, մեկնաբանելով քրդարական տեսիլք⁴⁸, հակուած են այն մտքին, որ դրանում արտայայտուած է Ասածոյ Փառքի յայտնութեան, չորս աւետարանիչների եւ ողջ աշխարհում Քրիստոսի թագաւորութեան տարածման կանխատեսումը⁴⁹:

Իսկ Ջաքարիան իր մանրանկարում տեսնում է հենց Յիսուս Քրիստոսին, որ բազմած է չորեքկերպեան աթոռին. «Տեսիլն Եզեկիէլի գոր ետես ի գետն Զորար. զանիւն եւ զխորհուրդ չորեք կերպ[եա]ն աթոռոյ. եւ Զ[րիստո]ս ի վ[ե]ր[այ]ն Գ[ո]ր[ա]ն բազմեալ»: Նա Եզեկիէլին պատկերում է Վասպուրականում ընդունուած պատկերագրութեան համաձայն:

Շարքի յաջորդ երկու մանրանկարները ներկայացնում են նախաստեղծների՝ Ադամի ու Եւայի պատմութիւնը:

Եւայի արարման եւ մեղսագործութեան պատկերների յօրինուածքը գրեթէ նոյնն է: Արժանաչափաւոր առաջին մանրանկարում՝ դրախտը ուռուցող գետերն են: Ջաքարիան գետերը պատկերել է չրջանակից դուրս: Գեհոնը, Փիսոնը, Եփրատն ու Տիգրիսը կարծես դուրս են յորդում պատկերի չրջանակից դէպի թերթի արտաքին մակերես: Սա ոչ միայն կոտորում է մանրանկարի անշարժութիւնը, այլեւ խորհրդարանօրէն ազդարարում է գալիք իրադարձութիւնների սկիզբը, դրանց փրկաբանական բնոյթը: Չորս գետերը չորս աւետարանների նշանակներն են: Յիսուս Քրիստոս, աւետարանիչներ եւ աւետարաններ, այս խորհրդարանութեամբ էլ իրար են կապւում «Եզեկիէլի տեսիլք» եւ «Եւայի արարում» մանրանկարները:

«Մեղսագործութիւն» մանրանկարում փրկագործութեան թեման հասնում է իր կիզակէտին: Եւան ու Ադամը կանգնած են դէմ-յանդիման չարի ու բարու գիտութեան ծառի աջ ու ձախ կողմերում: Եւան արդէն մերկ է, քանի որ պատուիրանազանց է եղել, իսկ Ադամը պատկերուած է լուսապսակով ու հանդերձնեով, նա դեռ չի ճաշակել արգելուած պտուղը: Ջաքարիան այս մանրանկարում միատեղել է նախաստեղծների մասին աստուածաշնչական պատմութեան մի քանի

դրուագ, որոնք ժամանակագրորէն հետեւում են իրար: Թեւեաւոր օձը (բանասարկուն) արտաքինից (այսինքն՝ պատկերի շրջանակից դուրս գտնուող նկարադաշտից) ներթափանցել է դրախտ եւ շէնջում է Եւայի ունկին իր թունայից ու կործանարար խօսքերը⁴⁸, Եւան արդէն ճաշակել է պտուղն ու առաջարկում է այն Ադամին⁴⁹, Յիսուս էմմանուէլը (Փրկիչը), որին Ջաքարիան պատկերել է յօրինուածքի վերնամասում երկնային հատուածի մէջ, աջը ուղղել է դէպի Ադամը⁵⁰:

Այս տեսարանից յետոյ Ջաքարիա Աւանցին շարունակելով ու զարգացնելով փրկարանական թեմայի բացայայտումը՝ մանրանկարչական անցում է կատարում դէպի Նոր Կտակարան:

Նոր շարքը սկսւում է «Աւետում» պատկերով: Այստեղ առաջնային է Փրկչի աշխարհ գալու աւետիսը, որ տալիս է Գաբրիէլ հրեշտակը Մարիամին: Գաղափարական կառոյցը, որ օգտագործել է Ջաքարիան, շատ յստակ է: Հրեշտակի բերած լուրը, որ Մարիամը (երկրորդ Եւան) պիտի դառնայ Փրկչի մայր, մարգարէացում է «Մենդոց» գրքում, որպէս Աստծոյ խոստում մարդուն: Մեղսագործ Ադամին Աստծոյ ուղղած «Մի ես» հարցադրումը բարոյաբանական բնոյթի է եւ նպատակ ունի ի պատասխան լսելու Ադամի զղջումը: Սակայն սխալը ընդունելու փոխարէն Ադամը մեղադրում է Եւային, իսկ Եւան իր հերթին մեղադրում է օձին⁵¹:

Պատուիրանազանց մարդիկ եւ բանասարկու օձը (սատանայ) Աստծուն անհնազանդ լինելու պատճառով դատապարտւում են, սակայն օձի դատաւճիռը արձակելիս Աստուած միաժամանակ փրկութեան յոյս է տալիս Ադամին ու Եւային: Դիմելով օձին՝ Նա ասում է. «...Եղից քննանութիւն ի մէջ քո եւ ի մէջ կնոջդ, եւ ի մէջ զաւակի դորա. նա խորտակեսցէ զզուիս քո, եւ դու խորտակեսցես զգարշապար նորա...»⁵²:

Եկեղեցու շատ հայրեր, քննելով Աստուածաշունչը, եկել են այն եզրակացութեան, որ այս մարգարէութիւնը ուղղում է Երկրորդ Եւային՝ Սուրբ Կոյս Մարիամին, ով ծառայեց փրկագործութեանը՝ աշխարհ բերելով մարդեղացած Փրկչին: Առաջին Ադամի կինը պատճառ դարձաւ անկման, իսկ Երկրորդ Ադամի Մայրը դարձաւ փրկագործութեան գործիք⁵³: Աստուած խոստանում է Փրկիչ եւ կատարում է խոստումը:

Նոր կտակարանեան մանրանկարներն ընդհանրապէս պատկերազրում են աստուածային խոստումի կատարման պատմութիւնը: Բայց Ջաքարիա Աւանցու պատկերներում այդ թեման աւելի առարկայօրէն է արտայայտուած, յատկապէս «Մկրտութիւն» եւ «Խաչելութիւն» մանրանկարներում: Առաջինում Յիսուսը ջախջախում է օձի գլուխը: Նա պատկերուած է կանգնած անմիջապէս անդնդային վիշապի գլխին: Երկրորդում ընդգծուած է փրկագործութեան կերպը՝ Յիսուս Քրիստոսի զոհաբերական մահը՝ որպէս միակ միջոց փրկագործութեան: Ջա-

քարիան ընտրել է «Խաչելութիւն» տեսարանի այն տարբերակը, որտեղ խաչափայտից վեր պատկերւում է հաւալուան թռչունը՝ Յիսուսի արեամբ փրկուած հանրութեան՝ Եկեղեցու խորհրդանիշը⁸⁴։

Ամփոփենք։ Զաքարիա Աւանցու հին կտակարանեան շարքի մանրանկարները իւրատեսակ նախագուռ են դէպի Աւետարան եւ պատկերագրորէն նախապատրաստում ու օգնում են ընթերցողին աւելի դիւրին դարձնելու աւետարանական բնագրի ընկալումը՝ ուշադրութիւն հրաւիրելով սուրբգրային առաւել կարեւոր ու վճռորոշ իրադարձութիւնների վրայ։ Իսկ Զաքարիայի ստեղծած մանրանկարների ամբողջական շարքը գեղարուեստական արտայայտչականութեան ու աստուածաբանական ենթախորքի մեկնարանման միաձոյլ եւ կուռ համակարգ է, որում միաբանուած աստուածաշնչեան կերպարներն ու թեմաները միաւորուած են մէկ առանցքի շուրջ, որը Յիսուս Քրիստոսն է՝ Փրկիչը եւ նրա փրկագործութիւնը⁸⁵։ Եւ այդ գաղափարն այս մանրանկարներում արտայայտուած է ոչ միայն ընդհանուր պատկերագրութեան, այլեւ յորինուածքների մանրամասների մէջ, առանձին խորհրդապատկերներով ու խորհրդանշաններով, որոնց միջոցով էլ բացայայտում է պատկերագրական շարքի գլխաւոր միտքը, եւ առաջին հայեացքից անկախ ու ինքնաբաւ թուացող պատկերները միաբերան վկայում են Փրկչի ու փրկագործութեան մասին։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Վասպուրականցի այս մանրանկարիչը ստեղծագործել է 1432-1483 ընթացքում։ Եղել է Մեծփափանքի սան, աշակերտել է Թովմա Մեծփափանքուն։ Նա ձեռագրեր է նկարագրողել Արճէշում, Վանում, Արծկէշում, Մեծփափանքում, Արգելանի Վանքում, Սոխարափանքում, Կտուց եւ Լիմ անապատներում եւն։

² Այդ նորամուծութիւնների արդիւնքում փոխւում էր ոչ միայն մանրանկարի պատկերագրութիւնը, այլեւ յաջորդական տեսարանների կազմն ու գեղարուեստական մեկնաբանութիւնը։

³ Զաքարիա Աւանցու կեանքի եւ ստեղծագործութեան մասին տե՛ս՝ Մեսրոպ Արք. Տէր-Մովսիսեան (Մագիստրոս), «Զաքարիա Նկարչի Զեռագիրը Եւ Դաւիթ Բէկի Մասին Յիշատակարան», Բանբեր Հայաստանի Գիտական Ինստիտուտի, գիրք Ա. եւ Բ., Վաղարշապատ, Լուսժողովմատի տպարան, 1921-1922, էջ 127-137. նաեւ՝ Հրավարդ Յակոբեան, Հայկական Մանրանկարչութիւն, Վասպուրական, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1978, էջ 247. նաեւ՝ Նորայր Արք. Մովսէկան (Պողոսեան), Հայ Նկարողներ (ԺԱ.-ԺԲ. դար), Երուսաղէմ, 1989, էջ 171-174. նաեւ՝ Աւետ Աւետիսեան, «Զաքարիա Երէջ Աւանցու Զեռագրական Ժառանգութիւնը», իջմիածին, 1988, Զ., էջ 90-98. նոյնի՝ «Մենզոց՝ Պատկերաշարը Զաքարիա Աւանցու Զեռագրերում (16-17 դդ.)», Աստուածաշնչական Հայաստան, Երեւան, Նոյեան Տապան Հրատ., 2005, էջ 708-714. նոյնի՝ «Միջնադարեան Խորհրդապատկերներ. Լեւիթան Զուկն Ու Արմաւ (Փիւնիկ) Թռչունը», Հայ Արուեստ, Հար. 3, «Մոմիկ» Հայ Մշակութի կենտրոնի Հրատ., 2005, էջ 34-36։

⁴ Նորայր Արք. Պողոսեանը ենթադրում է, որ Զաքարիան ծնուել է 1555ին (Հայ Նկարողներ (ԺԱ.-ԺԲ. դար), էջ 171)։

- ⁵ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Զեռագրերի Գիտահետազոտական ինստիտուտ (այսուհետև՝ ՄՄ), ձեռագրեր թիվ 5507, 6503:
- ⁶ Ջաքարիա Աւանցու մահուան թուականը ճշտում է նրա աշակերտներից մէկի՝ Յովհաննէս Սարկաւագի թողած յիշատակարանի շնորհիւ (Յուշակ Հայերէն Զեռագրաց Նոր Զուգայի Ամենափրկիչ Վանքի, Հոր. Ա., կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, Միխիթարեան Տպ., 1970, էջ 126-127):
- ⁷ ՄՄ 5507, 6503, 5794, 2804, 10220, 4101, 7755, 4838, 5345, 4981: Այս վերջինը յայտնաբերել ենք շնորհիւ արուեստարան Աստղիկ Գէորգեանի Անանուէ Հայ Մանրանկարիչներ Մատենագիտութիւն 9-17 զգ. աշխատութեան, Գահիրէ, «Սաթենիկ Զագրը» Հիմնադրամի Հրատարակչական Յանձնարումը, 2005, էջ 422:
- ⁸ Այս ձեռագրի մանրանկարները, անկասկած, պատկանում են Ջաքարիա Աւանցուն, սակայն իրենց ոճով ու պատկերազրութեամբ էազէս տարբեր են նոյն թուականին ստեղծուած թիւ 6503 ձեռագրի մանրանկարներից: Հաւանաբար Ջաքարիան այդ ձեռագրերն ընդօրինակելիս օգտագործել է երկու տարբեր գաղափար օրինակներ, կամ էլ 6503 ձեռագրի մանրանկարները պատկանում են նրա նկարչական գործունէութեան վաղ շրջանին եւ 1595ին Ջաքարիան հրաժարուած է այդ պատկերազրութիւնից ու ոճից եւ սկսում ստեղծագործել նորովի:
- ⁹ Զեռագրի նկարազարդմանը, որն, ըստ յիշատակարանի, «գրեցաւ եւ աւարտեցաւ» Առինջում (252 ը), գործուն մասնակցութիւն է ունեցել Ջաքարիայի աշակերտներից Մարտիրոս Արեղան: Աւետարանի մանրանկարների պատկերազրութիւնն ու ոճը թէեւ լիովին հետեւում են Ջաքարիայի արուեստին, սակայն ակնյայտօրէն զգացում է անվարժ ձեռքի միջամտութիւնը:
- ¹⁰ Զեռագիր մատենանի նկարազարդման այդ առանձնայատկութիւնը Վասպուրականում ի յայտ է գալիս ԺԳ. դարից (Հ. Յակոբեան, Զեռագիր Մատենաների Պատկերազարդման Արուեստը Վասպուրականում, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1997, էջ 9):
- ¹¹ ՄՄ 6503, 1ա, 2ա: Այս Աւետարանում ուրիշ թեմատիկ պատկերներ չկան: Մնացել է արարչագործութեան շարքի միայն երկու մանրանկար:
- ¹² Մանրանկարները բացատրադրերով օժտելը շատ բնորոշ է յատկապէս վասպուրականցի վարպետներին: Սա ոչ միայն օգնում է պատկերը ճիշտ հասկանալուն, այլեւ երբեմն այդ գրութիւններն ունեն աստուածաբանական, դաւանաբանական ու ծիսական բովանդակութիւն:
- Մենդոց եւ դրան յաջորդ մանրանկարների բացատրադրերը տալիս ենք ըստ 2804 ձեռագրի: Թէեւ միւս երեք ձեռագրում բացատրադրերը մի փոքր այլ ձեւակերպումներ ունեն, սակայն չեն խաթարում բուն ասելիքը:
- ¹³ «Վերջին դատաստան» տեսարանում Ջաքարիա Աւանցին գրեթէ միշտ պատկերում է պատուիրատուին: Նկարիչը գրութեամբ ծանուցում է պատուիրատուի ով լինելը, պատկերի տակ թողնում է նաեւ սեփական գաղտնագիր յիշատակագիրն ու դրա վերծանութիւնը: Բնականաբար այդ գրութիւնները վերաբերում են պատուիրատուի եւ նկարչի մեղքերի թողութեանը: Այսպէս. «Չստացող Ս[ուր]բ աւետար[ա]նիս Գ[ր]տիքն որունն որ ունի ի ձեռին եւ խնդրէ գր[ու]թիւնն մեղ[ա]յց իւրոց» եւ «Չմեղապարտ Ջաքար[ի]այ ցկարողս մի քերան յիշեայ եւ Ա[ստուա]ծ գրեզ յիշեայ. ամէն», ձեռ. 2804 (22բ): Սակայն Աւետարանի յիշատակարաններից (104ա, 265բ) պարզ է դառնում, որ ձեռագրի իրական ստացողը չոռոթեցի կին Շահալամն է իսկ Դաւիթը նրա որդին է: Հաւանաբար Դաւիթը մահացել է, եւ մայրը այդպիսով յաւերժացրել է նրա յիշատակը:
- ¹⁴ Աւետարան 1483 թ., ՄՄ. 6879, Աւետարան ԺԵ. դար, ՄՄ. 5519:
- ¹⁵ Աւետարան 1475 թ., ՄՄ. 5013, 1բ, Աւետարան 1483 թ., ՄՄ. 6879, 3բ:
- ¹⁶ «Էջմիածնի Աւետարան», 989 թ., ՄՄ. 2374, 8ա:

- ¹⁷ «Վազգէն Կաթողիկոսի Աւետարան», Ժ.-ԺԱ. դար, ՄՄ. 10780, 5ր:
- ¹⁸ Դրանցից առաւել յայտնին Հեթում Բ-ի Ճաշոցն է. 1286 թ., ՄՄ. 979:
- ¹⁹ Յամենայնդէպս, աւելի վաղ լրջանի նմուշներ մեզ յայտնի չեն:
- ²⁰ 1317 թ., ՄՄ. 353, 8ա:
- ²¹ Արարչագործութեան օրերի պատկերումը անուանաթերթի գլխատառի մէջ, ըստ Սիրարիի Տէր-Ներսէսեանի, յատուկ է արեւմտեան պատկերագրութեանը: Մասնաւորապէս յատկանական Աստուածաշունչերում ընդունուած էր այդ կարգը (Sirarpie Der Nersessian, *L'Art Armenien des Origines au XVII^e Siècle*, Paris, Arts et Métiers Graphiques, Flammarion, 1977, էջ 224):
- ²² 1367-1371 թթ., ՄՄ. 352, 3ր:
- ²³ «Արարչագործութիւն» շարքի պատկերագրական այս տարբերակը թեման ներկայացնում է նախորդից տարբեր ու աւելի ամբողջական:
- ²⁴ Աւետարանը (ՄՄ. 6503) նկարագարողուի է Հերմոնի վանքում 1340-ից առաջ (Աստղիկ Գէորգեան, «Վաղոց Զորի Մանրանկարները 14-15-րդ դդ.», *Էջմիածին*, 2000, Ա., էջ 142-155. նաեւ՝ նոյնի Վաղոց Զորի եւ Որոտանի Մանրանկարչութիւնը 13-17-րդ դդ., Երեւան «Զանգակ 97» Հրատ., 2003, էջ 37-66. նաեւ նոյնի Անանուն Հայ Մանրանկարչներ. Մատենագիտութիւն 9-17-րդ դդ., էջ 160. նաեւ՝ Հայկական Մանրանկարչութիւն. Գրիգոր Տաթևացի եւ Անանուն Միւնեցի, կազմեց, առաջարկեց եւ ծանօթագրութիւնները գրեց Ալվիդա Միլզոյիանը, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1987):
- ²⁵ ՄՄ. 6503 11ա, 12ա, 13բ, 14ա:
- ²⁶ ՄՄ. 10805:
- ²⁷ Մանրանկարների անուանումները տալիս ենք ըստ Առաքել Գեղամեցու բացատրադրերի:
- ²⁸ ՄՄ. 10805, 1բ, 2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա: Զեռագրի 10բ եւ 11ա թերթերին «Գուշակումն մարգարէից» եւ «Մարիամ, Քրիստոս եւ մարգարէք» մանրանկարներն են, որոնք խորհրդարանօրէն առնչուում են «Արարչագործութիւն» թեմային:
- ²⁹ 1601ին Առաքել Գեղամեցին նկարագարողի է եւս մէկ Աւետարան (ՄՄ. 7634), որն ունի «Արարչագործութիւն» թեմայի պատկերներ. «Արարչութեան» առաջի կիրակեի գորարար Ա[ստուա]ժ ի դաս իրեղինաց որ տան փառաբանութիւն Ա[ստուծոյ]» 1բ, «Արարչութեան» երկու շաբաթի. «Ջուրն ու իողն մէկ մէկէ բաժանեաց» 2ա, «Արարչութեան» երեք շաբաթի» 3բ, «Արարչութեան» չորեք շաբաթի. Արեգակն եւ լուսինն ստեղծ» 4ա, «սրան հետեւող մանրանկարը բացատրագիր չունի, սակայն ըստ հերթականութեան պէտք է, որ ներկայացնի հինգերորդ օրը «Հինգ շաբաթի» 5բ, «Ուրբաթ աւուրն Ադամ ստեղծ եւ Եւայ ի կողմն քաշեց» 6ա, «Էրախտն Ադամայ. Ա[ստուա]ժ եկեալ տեսութեան Ադամայ եւ պատուիրէր յուտել պտղուն» 7բ, «Ա[ստուա]ժ եկեալ եւ ասէ Ադամ եւ Ադամ քաքեալ ի տերես քզնոյ վ[ա]ս[ն] մերկութեան» 8ա, «Այս գարդ աշխարհիս» 9բ:
- ³⁰ Փաստօրէն Զաքարիա Աւանցին Հայր Աստուծոյ՝ Արարչին, նոյնացնում է Յիսուսի՝ Աստուածորդու հետ: Մանրանկարին այդպիսով հետեւում է հնադարեան մի կանոնի: Աստուծոյ նմանատիպ պատկերումն ընդունուած եւ կանոնացուած պատկերագրական ձեւ էր միջնադարեան արուեստում: Դա բացատրուում է նրանով, որ Հայր Աստուած աննկարագրելի է իր էութեամբ, եւ միջնադարեան արուեստագէտները նրան պատկերում էին կամ Յիսուսի՝ մարգարեալ Աստուծոյ նմանողութեամբ կամ էլ զուտ խորհրդանշօրէն:
- ³¹ Զարգը եւ զարգարուեստը նուիրական իմաստ ու դերակատարութիւն ունեն քրիստոնէական արուեստում: Զարգն է, որ խորհրդարանում է աստուածային եւ երկնային էութիւնների մասին:

- ³² Տե՛ս՝ «Երգ Աղօթական Տեսն Ներսիսի Շնորհալույ Հայոց Կաթուղիկոսի՝ Ի Դէմս Սրբոյ Երրորդութեանն...», *Ժամագրք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին*, 2004, էջ 41:
- ³³ «Յայնժամ արդարքն ծագեցան իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից», Աւետարան ըստ Մատթէոսի (ԺԳ, 43), Աստուածաշունչ Մատեան Հին Եւ Նոր Կտակարանաց Հոտ Զգրիտ Թարգմանութեան Նախնեաց Մերոց Համեմատութեամբ Երբայական Եւ Յունական Բնագրաց, Կոստանդնուպոլիս, Տպ. Գ. Պաղտատեան, 1895:
- ³⁴ Աստուածաշունչ Մատեան, Գիրք Մենդոց, (Ա 20-23):
- ³⁵ Յովբ, (Խ 20-28):
- ³⁶ Սաղմոսաց (ՀԳ/ՀԴ 14, ՃԳ/ՃԴ 27):
- ³⁷ Ս. Գրիգոր Տաթևացի, *Հուժմունք Յորայ*, ՄՄ. 1115, 110ա:
- ³⁸ Տե՛ս՝ *Մեկնութիւն Սաղմոսաց, Հոր. Զ.*, Վենետիկ, 1819, էջ 82:
- ³⁹ Արմատի գրաբարեան նշանակութիւններէց մէկը փունիկ թռչունն է (Հ. Գարրիէլ Աւետիքեան, Հ. Խաչատուր Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Նոր Բառգիրք Հայկազեան Հեգուի, Հոր. Առաջին, Ա-Գ, Վենետիկ, Ս. Ղազար, 1836, էջ 369):
- ⁴⁰ N. B. Pokrovski, Ocherki Pamyatnikov Khristianskogo Iskusstva I Ikonografii (Քրիստոնէական արուեստի եւ սրբանկարչութեան յուշարձանների ակնարկներ), Սանկտ Պետերբուրգ, Ս. Սինոդի Հրատ., 1910, էջ 18:
- ⁴¹ Փիւնիկի մասին տե՛ս՝ *Երանելոյն Կիւրդի Երուսաղէմայ Հայրապետի Կոչումն Ընծայութեան*, Վիեննա, 1832, էջ 404:
- ⁴² Ի դէպ, արարչագործութեան հինգերորդ օրուայ մանրանկարում Ջաքարիան շատ նուրբ կերպով անդրադարձել է նաեւ չորս տարրերի խնդրին՝ պատկերելով Լեւիաթանին (ջուր), Փիւնիկին (օդ եւ հուր), ցամաքային թռչուններին՝ սիրամարդերին (հող):
- ⁴³ Մասնաւորապէս՝ 1269ին նկարագարողուած Աստուածաշունչում, Երուսաղէմ, թիւ 1925: Եզեկիէլի տեսիլքի հնագոյն պատկերը հայկական արուեստում Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցում գտնուող որմնանկարն է (Է. դար):
- ⁴⁴ Սիրարփի Տէր-Ներսէսեանը գրում է, որ դա իրեն յայտնի առաջին օրինակն է հայերէն աւետարանների մէջ (Սիրարփի Տէր-Ներսէսեան, «Մինաս Նկարող Եւ Իր Մաղկած Նկարները», *Միտն*, 1951, Մայիս, էջ 146):
- ⁴⁵ Bibleysko-Biograficheski Slovar (Աստուածաշնչային-կենսագրական բառարան), Սանկտ Պետերբուրգ, Վասիլի Պոլիակովի Հրատ., 1849, էջ 13:
- ⁴⁶ Տե՛ս՝ Եզեկիէլի մարգարէութեան Ա 1-28 հատուածը:
- ⁴⁷ Tolkovaya Bibliya Ili Kommentariy Na Vse Knigi Sv. Pisaniya Velkhogo I Novogo Zaveta (Բացատրական Աստուածաշունչ կամ Հին եւ Նոր կտարակարանների սուրբ գրոց բոլոր գրքերի մեկնաբանութիւններ), Հոր. 9, Սանկտ Պետերբուրգ, 1913, էջ 227. նաեւ՝ Mifi Narodov Mira, (Աշխարհի ժողովուրդների միթոսներ), Մոսկուա, «Սովետական Հանրագիտարան» Հրատ., 1980, Ծ. 1, էջ 482:
- ⁴⁸ Գիրք Մենդոց, (Գ 1-5):
- ⁴⁹ Նոյն, 6-7:
- ⁵⁰ Սա ներկայացնում է այն դրուագը, երբ Աստուած կանչում է անկեալ Ադամին՝ «Ռւբես»։ Տե՛ս՝ նոյն, 9-10:
- ⁵¹ Նոյն, 12-13:
- ⁵² Նոյն, 15-16:
- ⁵³ Տե՛ս՝ Tolkovaya. Հոր. 1, 1904, էջ 27:
- ⁵⁴ «Խաչափայտի գլխին, ուր ցուցանակն է լինում սովորաբար, քեւատարած հաւալուսիքն կերակրում է իւր ծագերին կրծքի արիւնով. եկեղեցու նշանակն է այդ...»

(Գարեգին Արք. Թովսէփեան, Մի էջ Հայ Արուեստի Եւ Մշակոյթի Պատմութիւնից, Հալէպ, Տպագր. «Արաքս», Բ. Թ. Թովսէփեան, 1930, էջ 47):

⁶⁶ Փրկութեան գաղափարի վրայ այսօրինակ կենտրոնացումը պատահականութիւն չէ: Պէտք է պարզապէս յիշել, թէ ինչ ողբերգական իրավիճակում էին Հայաստանն ու Հայերը Զաքարիա Աւանցու ասորած ժամանակաշրջանում:

THE THEME OF REDEMPTION IN THE
MINIATURE PAINTINGS OF ZAKARYA AVANTSI
(Summary)

AVET AVETISYAN
avetavetisyan@yahoo.com

The author analyses certain characteristics of Zakarya Avantsi's Matenadaran miniatures and assesses them based on the achievements of the miniature painters who preceded him. The author shows how Zakarya developed and improved such types of pictures in both structure and content.

Zakarya created his paintings in the late 16th and early 17th centuries, mostly in Vaspurakan and Persia. His art work counts 19 miniature *Avetarians* (gospels), 2 *Mashtots*, 1 *Aghotamadyts*, and two pieces. A significant part of this heritage is preserved in Matenadaran, Yerevan. The 10 miniature and complete gospels give a full view of Zakarya's miniature art, verify his painting style, his way of constructing the miniature and coloring it. Besides, these miniatures enable the author to highlight the style and symbolic peculiarities of Zakarya's miniatures.

His sequence of miniature paintings starts with pictures inspired by the description of God's seven days of creation in the Book of Genesis. Eventually these Old Testament miniatures lead to Zakarya's gospel miniatures. However, Zakarya prioritized the concept of the redemption of Jesus. His preference becomes obvious through both a holistic view of his miniatures and the specific symbolism he used. This becomes more obvious in the miniature of the 5th day of creation, where the Leviathan (Satan) encounters the Phoenix (Jesus the saviour).

